ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

«ՀՀՌՑ-ԷԱՃԱՊՁԲ-18/28» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով
Ավտոպահեստամասերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 29.10.2018թ. ժամը 16.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Հ. Սարոյանը
Անդամներ՝	Վ. Ավետիսյանը
	Հ. Հակոբովը
Հանձնաժողովի քարտուղար՝	Մ. Նիկոլյանը

1. <u>Ընդունել ի գիտություն.</u>

1.1 Գնահատող հանձնաժողովի 27.10.2018թ. ժամը 12.00-ին կայացած նիստում արձանագրվել էր, որ ՌԻՆՈ, Մոսէքսո ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում դիմում-հայտարարությունները ներկայացված են ոչ համապատասխան և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (Կարգ) 41-րդ կետով՝ նիստը կասեցվել էր մեկ աշխատանքային օրով առաջարկելով մինչև 29.10.2018 շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

1.2 Հարցում է ուղարկվել ՀՀ ֆինանսների նախարարություն /լիազոր մարմին/՝ հայտերը մերժելու վերաբերյալ պարզաբանում և ՀՀ գնումների օրենսդրությանը համապատասխան որոշում կայացնելու համար:

2. <u>Հանձնաժողովն արձանագրեց.</u>

2.1 ՌԻՆՈ ՍՊԸ կողմից ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը ներկայացվել է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան՝ մասնակիցը հանդիսանում է ոչ ռեզիդենտ:

2.2 Մոսէքսո ՍՊ ընկերության կողմից վերը նշված ժամկետում փաստաթուղթը չի շտկվել:

3. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

3.1 Թեմուր Գալստյան ԱՁ, Սարուխան Բրուտյան Մուշեղի ԱՁ, Արպանիվ ՍՊ, ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊ, ՌԻՆՈ ՍՊ ընկերութունների հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.2 Համաձայն Կարգի 41-րդ կետի /եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար, հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է/ մերժել Մոսէքսո ՍՊ ընկերության հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.3 Էլեկտրոնային **www.eauction.armeps.am** համակարգով և հանձնաժողովի որոշմամբ՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝ **առաջին տեղը** զբաղեցրած մասնակիցներ ճանաչել հետևյալ չափաբաժիններով.

Արպանիվ ՍՊԸ-ն՝ 1,2,4,6,8,12
Ռինո ՍՊԸ՝ 7,9,10
ԱՁ Սարուխան Բրուտյան Մուշեղի՝ 3,11,15,17
ԱՎՏՈՖԱՆ ԷՅ ՍԻ ՍՊԸ՝ 13,14,18,19,20,21,22,23,24,25,26

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.4 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեին կատարել հարցում՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.5 Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին սույն արձանագրության 3.3 կետով նշված չափաբաժիններով՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ ներկայացնել Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը /անվանում, ապրանքային նշան, արտադրող, ծագման երկիր, տեխնիկական բնութագիր/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.6 Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ 5 և 16-րդ չափաբաժիններով՝ ղեկավարվելով Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի «զ» պարբերությամբ և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի /Օրենք/ 37 հոդվածի 1-ին մասի 1-ին կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.7 Հաստատել չկայացած ընթացակարգի մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.8 Հետագա որոշումներ կայացնել՝ սույն արձանագրության 1.2 կետով նշված հարցմանը լիազոր մարմնի կողմից տրված պարզաբանման նկատառումով

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

3.9 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. նոյեմբերի 3-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Հ. Սարոյան

անդամներ՝ Վ. Ավետիսյան

Հ. Հակոբով

քարտուղար՝ Մ. Նիկոլյան